



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<18>> *Կուսիբաբ* 2018թ.

N *109* - Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ազդարարման համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի չորրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի N 272-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի հունիսի 13-ի N01/21/3676-18 գրությունը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին նշանակել արտաքին և ներքին ազդարարման հաղորդումների հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու պատասխանատու անձ՝ հաշվի առնելով մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային առանձնահատկությունները:
2. Աշխատակազմի ազդարարման համար նշանակված պատասխանատու անձանց՝ ներքին և արտաքին ազդարարման դեպքում <<Ազդարարման համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում ստացված հաղորդումները պատասխանատու անձի կողմից հաշվառել գրանցամատյանում համապատասխան գրառման կատարմամբ:
3. Աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին /բաժնի պետ՝ Հ. Վարդանյան/ ազդարարման դեպքում հաղորդման հաշվառման և հաղորդումներին ընթացք տալու համար պատասխանատու անձնաց տվյալները տեղադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կայքէջում:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալներին, օգնականներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավարին, աշխատակազմի ղեկավարի տեղակալին, աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, մյուս աշխատողներին՝ ապահովել <<Ազդարարման համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 15-ի <<Ներքին և արտաքին ազդարարման դեպքում հաղորդումների հաշվառման և վերահսկման օրինակելի ձևը, ինչպես նաև ազդարարման տրվող պաշտպանության միջոցների իրականացման ընթացակարգը սահմանելու մասին>> N 272-Ն որոշմամբ սահմանված N 1 հավելվածի պահանջների խստիվ պահպանումը:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փառանձեմ Կարապետյանին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝



Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ